

ականջներն ու լեզուն կտրել, աշուրները բռնել, անդամները ջախջախել եւ մարմնոյ ծակերուն մէջէն հալած կապար թափել կը հրամայէր. իւր անագորունութիւնը՝ անառակութեանը հետ կը մրցէր։¹

Լեհ մատենագիրն այս վկայութիւնն որ ստուգիւ հայ մատենագրէն անկախ է բոլորովին՝ կը բառնայ Մինաս սարկաւազին ճշմարտախօսութեան նկատմամբ ամենայն հնարաւոր կասկած։

Ստեփան Վոյվոտային այս անագորունութիւնը դիտեալ արգիւնքն յառաջ բերին. իւր երկիրը Հայոցմէ մեծաւ մասամբ ազատեցաւ, ումանք իրենց հաւատքին վրայ մահ յանձն առին, այլք երկրին կրօնն ընդունեցան, սակայն մեծագոյն մասը սահմաններն անցնելով՝ մերձաւոր տէրութիւնները ցրուեցան։

Մոլտաւիայէն գաղթող Հայոց՝ Լեհաստանն ամենէն աւելի նպաստաւոր երեւելով՝ կրցաւ զանոնք յինքն յանկուցանել։ Կարմիր Ռուսիայի թէոդորոս իշխանին կառավարութենէն ի վեր՝ (1062)² Լեհաստան հայ գաղթականութիւններ հաստատուած էին, տեղւոյն վեհապետներէն կուտելով, որոնք իրենց հանդիսապէս կը խոստանային բաց ի կրօնական ազատութենէ՝ նաեւ այլեւայլ առեւտրական մեծամեծ արտօնութիւններ, եւ նոյն իսկ իրենց սեպհական ատեաններէն դատուելու իրաւունքն, որոնք ըստ հայրենի օրէնսդրութեան իրենցմէ բաղկացեալ էին։³ Բայց Հայոց նոյն երկիրը խաղաղ բնակութիւն մ'իւրաջնաւորողը՝ ոչ այնչափ վեհապետաց խոստմունքն էին՝ որչափ այն՝ որ այնպիսի ժողովրդեան մը մէջ կը գտնուէին՝ որ թէպէտ մեծաւ մասամբ կաթուղիկեայ՝ սակայն չունէր Հայոց կրօնին դէմ՝ այն արհամարհանքն ու վատահամբալիչ կարծիքները, զորս Յոյնք իրենց համածէս ազգաց մէջ կրցան քիչ շատ մուծանել։

Բայց միթէ Հայոց դէմ հանուած այս հալածանքը՝ մի՞ միակն է, որով Ռումանացոց հակաթիւններէն երեւան ելաւ, գործելով անոնց դէմ՝ այսպիսի բռնութիւններ։ Ահաւասիկ խնդիր մը՝ որ մեզի համար մեծ ծանրակշռութիւն ունի այնու՝ որ Մինաս իւր դարէն յառաջ եղած հա-

լածանաց վրայ ալ ականարկներ կ'ընէ, մինչ Պր. Հաշտեու ռումանական պատմութեան բովանդակ շրջանին մէջ բոլորովին հակառակը կը հաստատէ։

Մինաս սարկաւազին ականարկները շատ յողորդօք ըլլալով՝ չեն կրնար պատճառաբանեալ քննադատութեան մը դէմ՝ որ առանց ստոյգ ու վաւեր յիշատակարանաց բան չի հաստատեր՝ ի մէջ բերուիլ։ Բայց Ստեփան Ռարէշին թագաւորութենէն վերջն եկող ժամանակին նկատմամբ՝ Հայոց յիշատակարաններէն զատ՝ որ կը պատմեն թէ Հայք շատ դժուարին ժամանակներ անցուցած ըլլան այլեւայլ իշխանաց կառավարութեան ներքեւ, Էնկէլ ի մէջ կը բերէ Պոկտան Պ. ին (1568—1572)՝ Աղեքսանդր Լաբուշնէանուի որդւոյն մէկ հալածանքը։ Քսենոքոլ՝⁴ Էնկէլին հետեւելով կ'ըսէ, «Պոկտան իւր առ Լեհս չափազանց սիրոյն պատճառաւ կաթուղիկեայ կասկածուելով՝ այս ամբաստանութենէս ազատելու համար լաւ համարեցաւ Ստեփան Ռարէշին հետեւելով հալածել Հայերը՝ զորոնք ահագին տանջանաց ու մահուան կ'ենթարկէր, որպէս զի իրենց կրօնն ուրանան։»

Պատմութիւնը բաց աստի կը յիշատակէ ուրիշ հալածանք մը Տեսքոդ Վոյվոտային անկմանէն ետքը, զոր յարուցած են Գոմշա եւ Աղեքսանդր Լաբուշնէանու (1564), եւ երրորդ մ'ալ որ Տուգա Վոյվոտային հրամանաւն հանուած է (1671)։

Բնականաբար Պր. Հաշտեու այս ամենայն չէր կրնար անդիտանալ՝ երբ իւր «Ի Ռումանիա կրօնական հանդուրժողութեան պատմութիւնը» կը գրէր, սակայն հոչակաւոր քննադատս՝ այս ամենայն իրենց ճշմարտաներքին արժէքին վերածելով կը պատմէ. այս նիւթիս մէջ իւր ունեցած մեծ անունն ու վարկը, որուն դէմ ոչ ոք կրնայ հակառակիլ, կու տայ իրեն այն հեղինակութիւնը՝ որով կարող կ'ըլլայ հաստատել թէ այս կարծեցեալ հալածանաց առաջինը՝ եւ ոչ իսկ տեղի ունեցած է, մինչ միւս երկուքը՝ հալածանաց կերպարանք չունին, Հայոց դէմ իրր թէ ի մասնաւորի սնուցուած ատելութենէ յառաջ եկած չըլլալով։

«Պոկտանին» Լաբուշնէանուի որդւոյն յարուցած հալածանքը՝ Էնկէլ՝ Kazi, Historia Hungariae գրութեան մէջէն տեղեկացած կ'աւանդէ, կ'ըսէ Պր. Հաշտեու (էջ 62), սակայն պատմութեան այն էջը՝ ոչ Էնկէլ ինքնին, ոչ Կէպարտի,

1 Քսենոքոլ, Պատմութիւն Ռումանացոց, Հտր. Գ. էջ 54։

2 Luceasi Christoforus, Historia Armenorum Transilvaniae.

3 Հայոց՝ 1344ին Գաղիմիր Մեծէն ընդհուած՝ եւ յետոյ իւր յաջորդներէն հաստատուած այս արտօնութիւնս՝ մինչեւ լեհական թագաւորութեան կործանումն տեւեց. Տես F. Bischoff. Das alte Recht der Armenier in Polen. Wien 1857. — Dr. Kohler, das Recht der Armenier. Wien 1883. — Տես դարձեալ «Միլիթար Գոշի դատաստանագիրը» Բաստամանց, Վաղարշապատ. 1880։

4 Պատմութիւն Ռումանացոց. Հտր. Գ. էջ 9։